Հովհաննես Թումանյան

Մոռացված սեր

Սիրում էի երբեմըն քեզ...
Այժըմ ևս տակավին
Իմ սրտումը դու ապրում ես,
Բայց ոչ ուժով քո նախկին:

Առաջ հընչում էիր մաքուր,
Որպես աղոթք իմ հոգում,
Որպես սիրո նախանձ ու հուր՝
Տաք արյունս բորբոքում:

Այժմ՝ որպես վաղուց մեռած

Բարեկամի հիշատակ,
Կամ մանկության օրով սիրած
Մի հին երգի եղանակ...

Եվ անունըդ այժմ տալիս,
Էլ «հոգյակ» չեմ ես ասում,

Չեմ աշխատում քուն մտնելիս,
Որ քեզ տեսնեմ երազում:

Բայց զարմանքով երբեմնապես
Մտածում եմ ակամա,
Ինչո՞ւ էլ դու սիրելի չես,

Ինչո՞ւ ես քեզ մոռացա...

1892